

ԱՅ տարի առաջ կրնար մնդէն անցը-
նել թէ օր պիտի գայ յորում քահա-
նայք իրենց սրբազն զգեստներովը
խաշելութեան հետ մէկտեղ Ծինաց
բազմամարդ քաղաքներէն մէկուն մէջ
պիտի քալեն, բոլոր կուապաշտներուն
զարմանք պատճառելով։ Իայց ահա
Եստուած այսպիսի մեծ գործ մը այս-
օրուան օրս ուզեց ու կատարեց, իր կա-
մացը գործիք առնելով Կաղղիոյ տէրու-
թիւնն ու ընտիր պաշտօնէից խումբ մը։

„, Կուապաշտները կը տեսնեն մեր
հանդէսները, մեր արարողութիւնը, և
եկեղեցւոյն փառաւորութիւնը, կը զար-
մանան, շատն ալ կը գովեն. և թէ որ
հիմկուհիմայ գեռ կարողութիւն չու-
նին մեր սուրբ կրօնքը ընդունելու,
բայց վար զարնելով ալ չեն խօսիր
իբրև անարդ, ատելի ու վնասակար
բան մը. այս բանս Վիհանկնանի մէջ
աւելի յայտնի կը տեսնուի : Ես ամէն
բաներուս նախանձողներ ալ չեն պակ-
սիր, բայց այս կուսակցութիւնը այնչափ
ոյժ չունի : Կղղափառաց յառաջադի-
մութիւնը նորաղանդից միշտ գրգիռ մըն
է որ իրենք ալ Ծինաց մէջ իրենց ու-
սումբ տարածեն : Իաց՚ի զանազան ժո-
ղովարաններէն, զորս Վամհաքաղքին
մէջ ունին, քաղաքներ և գեղերը կը վա-
զեն, առատ առատ աստուածաշունչներ
կը բաժնեն, նոյնպէս Ծինաց լեզուովը
թարգմանուած ուրիշ այլ և այլ գրեեր
ալ : Խրբեմն գեղերու ու քաղաքներու
մէջ բազմութեան առջեւ ալ կը քարո-
զեն, ուսկից ժողովուրդը ուրիշ բան չի-
հասկրնար, բայց միայն քանի մը բա-
րոյական իմաստներ : Ը ատ անգամ
կ'ըլսայ որ իրենց քարոզները կը լմըն-
նան ուղղափառ կրօնքի և կամ խոս-
տովանութեան դէմ խօսելով, թէպէտ
և հասարակ ժողովուրդը խորհրդական
խոստովանութեան և ոչ անունը գիտէ .
քարոզէն վերջը գիրքերը կը բաշխեն .
շատ անգամ ծառային ձեռքով կը ցը-
րուեն գիրքերը, և անանկով կատարած
կը համարին իրենց առաքելութիւնը :

„, Վաղաքացի և գեղացի չինացիք ա-
սոնց իրենց լեզուովը Ֆատուայէն կ'ըսեն՝

որ գիրք բաժնող ըսել է . զիրենք տես-
նելու կը վազեն անցնելու ատենսին, կը
ծիծաղին և դիւրին է ենթազրելը թէ
առած գրքերնին առ ինչ կը գործածեն :

„, Վիհանկնան քաղաքին մէջ նորա-
զանդից քարոզութեան կերպը աւելի
սրսորդութեան կը նմանի . իրեք չորս
փառաւոր նաւակներու մէջ կը նստին,
հետերնին ունենալով իրենց կինն ու
տղաքը, և որսի հրացաններն ալ ձե-
ռուընին : Խրբեմն գեղ մը կամ քաղաք
մը կը հանդիպին, ուր սուրբ գրոց օրի-
նակներ բաժնելէն ետքը, նորէն իրենց
զուարձութիւնն և որոը առաջ կը տա-
նին, և ասով իրենց առաքելական քա-
րոզութեան պաշտօնը կատարած սեպե-
լով ենթազրեալ գարձի եկողներուն ա-
նուանքը կը նշաննեն, և իբրև նորազան-
դութեան յաղթանակ մը կը հրատա-
րակեն „ :


Ո՛չափ տարբեր է այս կերպը ուղ-
ղափառ եկեղեցւոյ քարոզչացը բանե-
ցուցած կերպէն, որուն նոյն իսկ այն
կողմերէն դարձող բարեսէր նորազանդ-
ները զարմացմամբ կը վկայէին մեզի և
կը նախանձէին, ցաւելով իրենց քարոզ-
չացը անձնասէր քան քրիստոսասէր գնա-
ցիցը վրայ :

ԲՆԱԿԱՆՔ

ԿԵՆԴՐԱՆԱԲԱՆԱՌԻ ԹԻՒՆ

Նոր երկրի Շուն :

Ը ուներու ցեղին մէջ Առ երկրի
Ը ուն ըսուածը աւելի ազնիւ սեպուած
է . վասն զի թէ տեսքովը և թէ մարդ-
կանց ըրած ծառայութեամբքը վեր
է քան իր տեսակին ուրիշ նները, և
Կանգրահեր՝ կոչուածէն ալ աւելի օգ-
տակար : Խրաւ է որ գանգրահերը իր
տիրոջը վրայ ունեցած սիրովը կամ ըն-
տանութեամբ մեծ օգնութիւն է անոր
ու այլ և այլ ձախորդութեանց մէջ ա-



Նոր երկրի շուն.

պաւեն, յաջողութեանց ժամանակ ալ իրեն զուարթ բնութեամբը կը զուարթացընէ զմարդ, ու ցաւոց մէջ ալ իր հաւատաբմնութեան ցոյցերովը կը միսիթարէ • բայց վտանգներ ալ կը հանդիպին որոնց մէջ չի կրնար իր տիրոջը օգնել: Ի՞նդհակառակին՝ Այր երկրի Շունը, վտանգներու պահապան մըն է ու զօրաւոր ազատարար. իր օգնութիւնը մարդկայինէն շատ աւելի է, և իր աղեկութիւնը ան է որ չէ թէ միայն իր տիրոջը, հապա առ հասարակ ամէն մարդու միօրինակ կ'օգնէ ինչ բանով որ կրնայ օգտակար ըլլալ գանգրահերթառանձին մարդու մը միայն բարեկամէ, իսկ Այր երկրինը բոլոր մարդկութեան. միայն Շալեանց կամ Ո. Ինեանարդոսի՝ Ե-

րան վրայ եղած շուներն են որ ասկէ աւելի գերազանց յատկութիւնք ունին:

Շայս ցեղ շունը, ինչպէս անտւնէն ալ կ'իմացուի, Նոր երկեր ըսուած կըզգւոյն մէջ կը զանուի, և դժուար ալ է գտնելը իրեն ուրիշ սեպհական երկիր մը: Իսկ Նոր երկեր կղզին՝ սրբոյն Խաւրենստիոսի պարանոցին քովերը կ'ինայ, Խապրատորի, Քանատայի մէջտեղը, և Հասարակածին մօտիկ: Ինքեր, լեռնոտ, ու Ճախնայինն երկիր մըն է ատիկայ, ու միշտ թանձը մառախուղով ծածկուած. Ճիւնն ալ չորս կողմը պատած, ու տարւոյն մեծ մասը կարգէ գուրս ցուրտ կ'ըլլայ հնն: Շուռակները, գետերը ու մօրուտները այնչափ շատ ու ընդարձակ են որ 120 փարսախ երկայնութեամբ և 66 ալ լայնութեամբ կղզւոյն երրորդ մասին մակերեսութը միշտ ջրով ծածկուած է:

¹ Ալտեանց կամ Ս. Բեռնարդոսի չներուն պատկերն ու պատմութիւնը տես Բազմավիպիս Ժ. Հատորը էջ 198:

Կոր երկրի շունը կարծես թէ այդ-
պիսի երկրի մը ու սառնամանեաց մէջ
քնակելու համար եղած է : Աերպարան-
քը ուրիշ ամէն շուներէն աւելի վը-
սեմ է, և անդամները աւելի հաստա-
տուն և ուժով : Ո բան թանձը ու եր-
կայի բուրդ մը ունի, որն որ ցուրտէ կը
պաշտպանէ զինքը . թաթերը կարգէ
դուրս կազմուածք մը ունին, լայն ու
պինդ են ոտքին ներբանքն ալ տափակ
են և մատերուն միանալուն տեղը
մաչկ մը ունի, որով մատերը շատ աւելի
իրարմէ հեռու կ'իյնան քան ուրիշ ցեղ
շներունը : Որ այս կազմուածքը շատ
յարմար է լողալու համար . և որովհե-
տե թագը շատ զօրաւոր է, ուստի լողա-
լով խորունկ ջրերու մէջ կ'ընկղոթի :
Կարգէ դուրս ոյժ և արագութիւն կը
ցուցընէ ալիքները ձեղքելու համար,
ու ջուրին երեսը կենալու կամ խորուն-
կը երթալու ունեցած ճարտարութիւ-
նը այնչափ է, որ կրնանք զինքը երկա-
կենցաղ կենդանեաց կարգը սեպել,
նոյնպէս յայտնի կ'երեայ. այս քանս իր
երկայն ցուոկին, բրդոտ ականջներուն,
մորթին վրայ՝ որ երբեմն սև ու եր-
բեմն ալ մոխրագոյն կ'ըլլայ . լայն ու մա-
զոտ թաթերուն, ծանր քալուածքին,
ուժին ու արագութեանը համար ալ
երբեմն քեւուային արջ կը կոչուի : Աե-
րած կերակուրներն ալ ընդհանրապէս
երկրին մէջ գտնուած ձկունքն են :

Այսպիսի ճարտար ու միանգամայն
առողջ կազմութեամբ, որ մարդկանց
համար ալ ամենահարկաւոր է, կենդա-
նի մը չէր կրնար դատարկ ու անօգտա-
կար կերպով մնալ այնպիսի երկրի մը
մէջ ուր բնութեան ամեննեին մէկ ա-
ռատութիւնը չտեսնուիր, և ուր մար-
դիկ ստիպուած են ապրելու համար ա-
մէն տեսակ աշխատութեան ձեռք զար-
նել : Կոր երկրի շունը Ոիքմաքացիք
և կարմիր հնդիները, որոնք կղզւոյն
մէջ ամենէն աւելի աղքատներն ու ո-
զորմելիները կը սեպուին, այլ և այլ
անսանոց պէս բեռան կամ ճամբորդու-
թեան համար կը գործածեն . նոյնպէս
նաև Խւրոպացիք ալ, ինչպէս Պաղ-

զիացիք, Խոլանտացիք, Վմերիկացիք,
և առաւել Վնդղիացիք որոնց ձեռքն
է կղզին, և զրեթէ 70,000ի չափ հո-
գի կղզւոյն արևելեան դին կը բնա-
կին : Ես շուներն են որ երկրին խո-
րերը, այսինքն դէպ 'ի ծովեղելք, կը
քաշեն կը տանին նաւարկութեան կամ
ձկնորսութեան համար ամէն հարկա-
ւոր եղած փայտերը : Արոէնլանտիոյ
ու Քամչատքայի շուներն ալ այսպիսի
աշխատութիւններ կ'ընեն իրենց տիրո-
ջը, բայց անոնց Կոր երկրի շանց հետ
ունեցած տարբերութիւննին աշխատա-
սէր սպասաւորի մը և անհնազանդ
գերւոյ ծառայութեանց կը նմանի :
Արոէնլանտիոյ, Քամչատքայի և Խո-
քիմացւոց շուները բալխիրին լծուած
լծուած, շատ անգամ ամէն ուժերնին
կը բանեցընեն բալխիրը կամ գլխիվայը
գարձնելու և կամ ջախջախնելու հա-
մար, որպէս զի աշխատութենէ խալը-
սին . օրինակի համար, եթէ շունը
տեսնէ որ կառավարը գաւազանը թո-
ղուցեր է, որ իրեն Պէէ մնրակի և թէ
երասանի տեղ կը ծառայէ, մէկէն կը
սկսի ուժով վազել որպէս զի որչափ
կարելի է տէրը գաւազանէն հեռացը-
նէ . և երբոր վախճանին հասնի կ'եր-
թայ կառքով կը զարնուի ինչ տեղւոյ որ
հանդիպի, և կամ փոսի մը մէջ կը նե-
տուի : Վնդհակառակն Կոր երկրի շու-
ները կը ջանան իրենց տիրոջը հնազան-
դելու և ամէն հնարք կը բանեցընեն ա-
նոր օգնելու համար . Ճարտարմտու-
թիւննին ու բարեսրտութիւննին կար-
գէ դուրս է . չորս շուն բալխիրի մը լը-
ծուած, չորս հարիւր լիալրէ փայտէն
աւելի ամենայն արագութեամբ կը քա-
շէն կը տանին խել մը մղոն տեղ, և
պէտք չէ որ կառավարը ամէն անգամ
հետերնին ըլլայ, բաւական է իրենց
ցուցընէ թէ ինչ ճամբով պիտի երթան
և ուր պիտի կենան : Վմբողջ բեռը կը բ-
նայ մարդ իրենց հաւտալ . կ'երթան կը
հասնին իրենց տեղը առանց ամեննեին
ճամբան կենալու, այնպէս՝ իբրեւ թէ
տիրոջը աչքը միշտ իրենց վրայ ըլլար,
և մտրակով կողերնուն զարներ : Վե-

ուերնին ձգելնուն պէս նոյն ճամբով նորէն անտառը իրենց տիրովը կը դառնան այնպիսի ուրախութեամբ որ կարծես թէ ուրիշ բեռ մըն ալ կ'ուզեն . Երթալին ալ դառնալին ալ ամենաքիչ ժամանակի մէջ կը լմբնցնեն : Ո՞իպէնց իրենց ճամբայ ելլելու միջոցին ու դառնալու ատեննին պէտք է քիչ մը կերակուր տալ :

‘Ո՞ր երկրի շունը ուրիշ տեղուանք ալ տարուած է , և ամէն տեղ իր զարմանալի յաջողակութիւնը ցըցուցած . քիչ մը վարժութեամբ կը սորվի ջուրին մէջէն այլ և այլ տեսակ բաներ հանել , և մասնաւորապէս խղդուելու վտանգէն զմարդիկ խալըսել . կրթուելով՝ կարգէ դուրս ընտանութիւն և սէր կ'երեցընէ տիրովը վրայ : Կարծես թէ միշտ աշխատութիւնը աչքին առջեն է , և ընելու պարտքը կը մտածէ . անդադար ջուրին ընթացքը կը դիտէ , և առանց մէկու մը նշանին , հանելու կամ խալըսելու բան մը տեսածին պէս մէկէն ջուրը կը նետուի . նաւահանգիստները , ջրանցքները ու առուակները ասկէ աւելի ապահով ու արթուն պահապան մը չէն կրնար ունենալ . բեռնաւորեալ նաւերու պահպանութեանն ալ լաւ կու գայ ու զէնք մըն է յուղկահարաց դէմ :

Այլեայլ գիպուածներ կը պատմուին աս շանս վրայօք , որոնք իր ճարտարմութիւնը ու եռանդը կը ցուցընեն : Անեկոծութեան միջոց , յորում ամէն մարդ իր կեանքը խալըսել կը մտածէ , սա կը դիտէ թէ ինչպէս ուրիշի կը ընալու օգնել . վտանգը տեսնելով և կամ ուրիշի մը ունեցած կարօտութիւնը իմանալով մէկէն ծով կը նետուի , անոր օգնութեան հասնելու համար : Իշխած է երթեմն որ զուարծութեան համար լր զացող մը կը տեսնէ շուն մը որ իր քովը կու գայ , վասն զի կենդանին հեռուանց տեսնելով զլողացովը և կարծելով թէ վտանգի մէջ է՝ օգնելու կը համնի , և չքաժնուիր իրմէ՝ մինչեւ որ ցամաք չելլէ : Երթեմն ճանապարհորդ մը առուակէ անցնելով , իր շանը բերանը թուղթ

մը կը տեսնէ , զորն որ ինքը առանց իմանալու ջուր ձգեր էր : Ո՞իպուած մըն ալ պատմենք որով աղէկ կ'իմացուի այս շանս ունեցած յատկութիւնքը :

Ութը-տասը տարուան երկու տղաք օր մը լ մնարայի մէջ կը զուարժանային ջուրին վրայ քար խալալով . ասոնցմէ մէկը պատահմամբ ջուրին մէջ կ'իյնայ կը խրի , ընկերը կը ջանայ զինքը խալըսել , բայց վերջապէս երկուքն ալ ջուրին մէջ կը ծածկուին . ժողովուրդը ճար մը կը մուածէր ան խեղձերուն որ երթեմն երթեմն ջուրին վրայ կը տեսնուէին , բայց որովհետեւ ջրանցքը խոր էր ու մօտերը նաւակ մը չէր տեսնուեր , խեղձերը վտանգի մէջ էին . եկաւ ‘Ո՞ր երկրի շուն մը , հազիւ թէ իմացաւ եղածը , մէկէն ջուրին մէջ նետուեցաւ , ու շուտ մը դուրս ելլելով տեսնուեցաւ տղոցմէ մէկուն զգեստէն բռնած , բայց տղան ինկաւ պատահմամբ , շունը նորէն ընկղմեցաւ և աւելի ևս եռանդեամբ փնտուելով դէպ ՚ի եզերք կու գար . ցամաք հասաւ ու գլուխը վեր առաւ , երկընցուց հանդիսականներուն իր բեռը . և երբոր տեսաւ զանիկայ ապահով հանդիսականաց ձեռքին մէջ , զնաց երկրորդ տղան խալըսելու ու սկըսաւ փնտուել . իր առջի ջանքը անօգուտ եղաւ և քիչ ատենէն ջուրին վրայ ելաւ շունչ առնելու համար . ցյուսահատեցաւ , նորէն ընկղմեցաւ ու պարծանքով մը ելաւ վզին վրայ տղան բռնած զորն որ մահուան ձեռքէն ազատեր էր . և երբոր ցամաք հասաւ իր բեռովը , գետին դրաւ տղան , և իմանալով որ իր պաշտօնը լմբնցեր էր , մէկէն հեռացաւ , կարծես թէ ժողովրդեան ծափահարութենէն փախչելու համար :

